Մինթէ Թիւրքաց պետութեան քաղաքական մարդիկ, որոնք այժմ արգելեցին իրանց երկրի մէջ «Մշակի» մտնելը, չեն հասկացել մինչև այժմ, որ եթէ հետևէին մեր խորհուրդներին, Թիւրքիան այժմ երջանիկ երկիր կը լինէր։

Մինթէ մէկի երեսին ճշմարտութիւն ասելը, մէկին օգտակար խորհուրդներ տալը, թէև խիստ և անխնայ մտրակող ձև տալով իր խօսքերին՝ նշանակում է նրան վնաս ուզել։ Ճշմարտութեան ձայնի դէմ ականջների մէջ բամբակ կոխելը,— դա ոչ թէ միայն ապերախտութիւն է, բայց և դատապարտելի անհեռատեսութիւն է։

Այդ տեսակ վարմունք անուանվում է քաղաքական անձնասպանութիւն։

Կամ մինթէ դորանով ենք վնասել Թիւրքիային որ այժմ թէ «Մշակը» և թէ «Փորձը» իրանց յանձն առած հանգանակութիւններով օգնում են Հայաստանի սովատանջ ազգաբնակութեանը։ Դիցուք թէ «Մշակը» կամ «Փորձը» այդ անում են դէպի իրանց Թիւրքիացի ցեղակիցները ունեցած լոկ ազգասիրական զգացմունքից դրդված,—բայց հետևանքը նոյն է մնում։ Գիտակցաբար թէ անգիտակցաբար մենք աշխատում ենք օգնութիւն հասցնել մեր պետութեան հարևան մի պետութեան թշուառ զաւակներին, ուրեմն դորանով իսկապէս օգուտ ենք բերում նոյն իսկ ամբողջ պետութեանը։

Եթէ ստուգվի մեզ հաղորդված անհաւատալի լուրը,—մենք Թիւրքաց կառավարութեան աբրածը մեզ դէմ ուրիշ անունով չենք կարողանայ դրոշմել, եթէ ոչ ամենասև ապերախտութիւն, և մի և նոյն ժամանակ ամենաանտակտ, ամենաանգործնական քաղաքական անհեռատեսութիւն։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

I

Ընկերութեան նպատակը, կազմութիւնը և միջոցները։

§ 1. «Թիֆլիսի ընկերութիւն հայերէն գրքերի հրատարակութեան» հիմնվում է Թիֆլիսում և նպատակ ունի հրատարակել հայերէն լեզուով թէ ինքնուրոյն և թէ թարգմանած գրքեր։

Ծանօթութիւն. Ընկերութեան հրատարակութիւնները ենթարկվում են տպագրութեան ընդհանուր կանոնադրութեանց։

§ 2. Ընկերութեան կազմողներն են՝ իսկական, մշտնջենաւոր, պատուոյ և աշխատակից անդամք։ Անդամ կարող են լինել երկու սեռից։ Անդամների թիւը սահմանափակուած չէ։

§ 3. Ընկերութեան հասոյթն է՝ ա. տարեկան և միանուագ վճարները. բ. ընկերութեան տպագրութեանց վաճառմունքից գոյացած գումարը և գ. թատրոնական ներկայացումներից, կոնցերտներից, հրապարակական դասախօսութիւններից և այլ՝ օրէնքով թոյլ տուած ձեռնարկութիւններից կայացած արդիւնքը։

II

Անդամների ընտրութիւնը, նոցա իրաւունքները և պարտականութիւնները։

§ 4. Իսկական, մշտնջենաւոր և աշխատակից-անդամ ընտրում է Վարչութիւնը, իսկ պատուոյ անդամ ընտրում է Ընդհանուր ժողովը։

§ 5. Պատուոյ անդամ ընտրվում են այն անձինք, որոնք իւրեանց անձնական արժանաւորութեամբ, կամ իւրեանց հասարակական դրութեամբ կարող են առանձնապէս օգուտ տալ Ընկերութեանը։

§ 6. Աշխատակից-անդամ ընտրվում են այն անձինքը, որոնք իւրեանց աշխատանքով կամ գիտութեամբ կարող են Ընկերութեանը օգտաւէտ լինել։ Աշխատակից անդամները ընտրվում են մի տարով։

§ 7. Այն այդինք, որոնք միանուագ նուիրում են ընկերութեանը ոչ պակաս քան հարիւր բուբլի, կարող են մշտնջենաւոր անդամ ընտրուել։

§ 8. Իսկական անդամը վճարում է տարեկան վեց բուբլի։

Ծանօթ. Այն իսկական անդամը, որ վեց ամսուայ ընթացքում չէ վճարել իւր տարեկան վճարը, համարվում է Ընկերութեան անդամակցութիւնից հրաժարուած։

§ 9. Ընկերութեան ընդհանուր ժողովների մէջ ներկայ գտնուող ամեն կարգի երկսեռ անդամները ընտրողական ձայն ունեն և ընտրելի են Ընկերութեան ամեն պաշտօնների համար։

III

Պաշտօնական անձինք և նոցա ընտրութիւնը։

§ 10. Ընկերութեան գործերը կառավարում են՝ ա. Վարչութիւնը և բ. Խմբագրական մասնաժողովը։

§ 11. Վարչութեան պաշտօնական անձինքն են՝ ատենապետ, փոխ-ատենապետ, երկու անդամք, ատենադպիր, գանձապահ և գրապահ։

§ 12. Վարչութիւնը վարում է ընկերութեան տնտեսական մասը, քննում է նորա դրամական հաշիւները և գումարը, պաշտպանում է, ուր պէտք է, նորա շահերը, պատրաստում է տարեկան ընդհանուր հաշիւը Ընկերութեան աշխատութեանց, կարգադրութեանց, կայքի և դրութեան մասին, ներկայացնում է ծախուց հաշիւը մօտաւորապէս և հոգում է Խմբագրական մասնաժողովի ընդունած գրքերի տպագրութեան մասին։ Վարչութեան կողմից են լինում բոլոր բանակցութիւնները որ և իցէ հաստատութեանց և անձանց հետ։

§ 13. Վարչութեան ատենապետը հսկողութիւն ունի, որ ճշդութեամբ կատարուին սոյն կանոնադրութիւնը և Ընդհանուր ժողովի, Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի վճիռները։

§ 14. Ատենապետի բացակայութեան ժամանակ՝ նրա պաշտօնը վարում է փոխ-ատենապետը։

§ 15. Վարչութեան ատենադպիրը կազմում է Ընդհանուր ժողովի և Վարչութեան նստերի արձանագրութիւնները։ Նա վարում է գրասենեակային գործերը և պահում է գրութիւնները։

§ 16. Վարչութեան գանձապահը վարում

Նոյի տապանն էր, ուր զետեղված էին ամեն տեսակ կենդանիներ։ Այդ բնակարանին կից էր մի երկրորդը։ Դա առաջինից զանազանվում էր նրանով միայն, որ առջևի ճակատը բոլորովին բաց էր և նայում էր բակին։ Դրան կոչում էին սրահ և ծառայում էր որպէս ամառուայ բնակարան։ Սրահի միջից բացվում էր մի դուռն գլխաւոր սենեակի մէջ, և այսպիսով նա ներկայացնում էր բուն բնակարանի նախագաւիթը։ Դրանց կողքին կար մի առանձին փոքրիկ սենեակ, որին կոչում էին օդայ։ Նրա դրները բացվում էին այն ժամանակ միայն, երբ տանը հիւր էր գալիս, և միշտ պահվում էր մաքուր ու զարդարված։

Զ.

Զը նայելով կեցութեան այդ անուշ և պարզ ձևին, կեանքը այդ նահապետական տան մէջ սահում էր ուրախ և լի ամեն բաւականութիւններով։ Աշխատանքը անդադար եռ էր գալիս և Աստուծոյ օրհնութիւնը թափվում էր այստեղ իր բարութիւններով։ Ներունի խաչոի ամբարները միշտ լիքն էին լինում ցորենով, իւղով, ձէթով և գինիով։ Տարվայ բոլոր եղանակներից օգուտ էր քաղում նա։ Թէ ցուրտ և թէ տաք օրվայ համար նա միշտ գործ և պարապմունքներ ունէր։

Ահա լեռների ձիւնը սկսեց հալվել, դաշտերը վաղուց ժպտում են գեղեցիկ կանաչով։ Գարուն է։ Օդը տոգորված անուշահոտ ջերմութեամբ կեանք է սփռում դէպի ամեն կողմ։ Ցորերի միջից վազում են հարիւրաւոր աղմկալի փոսկներ և օձապտոյտ ընթացքով տարածվում են հովտի մէջ։ Նորեկ ծիծեռնակը հրաւիրում է մշակին դէպի գործ։ Խաչոի որդիները արդէն պատրաստել են արօրը և գութանը։

Արևը դեռ նոր է սկսել ծագել։ դեռ նոր սարերի ձիւնապատ գագաթները վառվում են վարդագոյն ճառագայթներով։ Ներունին դառնում է առաւօտեան ժամից, աջ և ձախ ամեն հանդիպած մարդուն «ողորմի Աստուած» ասելով։ Նրա որդիները այսօր առաջին անգամ պէտք է դուրս բերեն եզներին և գոմէշներին, որոնք ամբողջ ձմեռը ախոռում կերել, գիրացել, հանգստացել են, և ամենևին դրսի լոյսը չեն տեսել։ Մեծ զուարճութիւն է գիւղացու համար այս տեսարանը, և այս պատճառով նրանցից շատերը հաւաքվել էին խաչոի տան դրան մօտ, որ տեսնեն, թէ ինչպէս էին պահվել և խնամվել նրա անասունները։

—Աչքդ լոյս, տանուտէր Խաչո, հարցրեց նրան գիւղացիներից մէկը։—այսօր տղերքը ուզում են «խամից հանել» գոմէշներին։

—Հա, ժամանակն է, մինչև երբ ներսումը պահենք. տէրտէրից հարցրի, ասաց «օրը բարի է»։ Ես էլ կամեցայ, որ այսօր դուրս հանեն, պատասխանեց տանուտէրը, մի առանձին նշանակութիւն տալով քահանայի խօսքերին։

Այս միջոցին ներսից լսվեցան զանգակի ձայներ և բազմութիւնը յետ քաշվեցաւ ճանապարհ բաց անելու համար։

—Այդ Զօրան է, լսելի եղաւ ամեն կողմից։

Զօրայ կոչում էին տանուտէրի նշանաւոր գոմէշներից մէկին, որի ճակատը սպիտակ լուսնաձև պիսակ ունէր և որը հռչակված էր իր ուժով և մեծութեամբ։ Վիթխարի անասունը փունչալով, մռնչելով, դուրս պրծաւ տան դրնից։ Դեմինը դողդողում էր նրա ոտների տակ։ Նա յանկարծ կանգ առաւ դրան առջևի հրապարակի վրա, և գլուխը վեր բարձրացնելով, սկսեց նայել իր շուրջը։ Նոյն միջոցին ծերունու տանուտէրը զարկեց նրա ճակատին մի ամբողջ անեծ ձու։ Զուն փչրվեցաւ և դեղնագոյն հեղուկը տարածվեցաւ սպիտակ ճակատի վրա։ Այդ նրա համար էր, որ չարը խափանվի և նրան «աչք չանէ»։ Զօրան այդ գործողութիւնից խրտնեցաւ, և եղջիւրները թափ տալով, մի սարսափելի թռիչք գործեց և յարձակվեցաւ այնտեղ հաւաքված ամբոխի վրա։ Նոյն միջոցին վրա հասան ծերունու որդիները և ահագին մահակներով աշխատում էին յետ դարձնել ամենի անասունին։ Մարդկային ուժը պատերազմում էր վայրենի ուժի դէմ։ փարախի մթութիւնից դէպի լոյս աշխարհ դուրս գալով, Զօրայի անսովոր աչքերին ամեն առարկայ անորոշ ձևով և մռայլի մէջ էր տեսնվում։ Նա այժմ մինչև անգամ չէր ճանաչում իր տէրերին, որ ամբողջ ձմեռը նրան կերակրել էին և որոնց ձեռքերը շատ անգամ խոնարհութեամբ լիզել էր նա իր հանգստութեան ժամանակ։ կատաղի մոլեգնութեան մէջ յարձակվում էր նա այս կողմ և այն կողմ։ Ընդդիմադրութիւնը անհնարին էր։ Խաչոի վեց որդիները ամեն կողմից հարուածում էին նրան։ Բայց անգին մահակների հարուածները ընդունում էր նա որպէս մի թեթև տաչեղի զարկ։ Ներունի տանուտէրը, հեռու կանգնած, լի հրճուանքով նայում էր այդ սոսկալի կռիւին, որ կարող էր պատիւ բերել ամենանշանաւոր հռովմէական կրկէսին։ Նրա աչքերի առջև հանդիսանում էին երկու չափազանց ուժեր, մէկը իր քաջ որդիների ուժը, միւսը՝ իր վիթխարի անասունի ուժը։ Երկուսն էլ հաւասար նշանակութիւն ունէին նրա համար։ Այդ երկու ուժերից կախումն ունէին նրա տընտեսութեան բոլոր աշխատութիւնները։ Այժմ կռիւը աւելի սաստկացաւ։ Որովհետև կորվեցաւ Զօրայի վզի հաստ շղթան, որից քարշ էին տուած մի ահագին գերանի կտոր, որպէս զի արգելէր նրա համարձակ քայլերը։ Գիւղացիները չուանների վրա վազեցին, որ կաչկանդեն նրան։ Բայց ամենի անասունի ամեն մի շարժումը բաւական էր չուանները կտրատելու համար։ Նա յարձակվում էր դէպի ամեն կողմ և ամբոխը ճանճերի նման փախչում էր նրա առջևից։ Այդ զարհուրելի խըռովութեան միջոցին կատարվեցաւ մի հրաշալի քաջութիւն։ Ներունի տանուտէրի միենոյն որդին, որին կոչում էին Ապօ, առիւծի ճարպկութեամբ վրա վազեց և բռնեց Զօրայի պօչից։ կատաղած անասունը, նկատելով այդ արհամարհական յանդգնութիւնը, շտապեց գլուխը յետ դարձնել, որ իր եղջիւրներով պատժէ անզգամին։ Գործվեցան մի քանի սաստիկ պտոյտներ։ Զօրան աշխատում էր յետ դառնալ, որ հարուածէ իր հակառակորդին, բայց Ապօն նրա պօչից պինդ բռնած, պտտվում էր նրա հետ։ Այդ մենամարտութիւնը տևեց մի քանի րոպէ։ Ամեն կողմից լսելի էին լինում զարհուրանքի ձայներ։ Ցայրացած գազանը մռնչում էր և գետնի մէջ ակօսներ էր ձգում իր ոտների շարժումներով։ Թանձր փոչին վեր էր բարձրանում և երկու կուռղները կորած էին հողեղէն ամպի մէջ։ Նոյն միջոցին վրա հասան Ապօի եղբայրները և շղթաներով կաչկանդեցին Զօրային։ Ամեն կողմից այժմ լսելի եղան ուրախութեան ձայներ։

Ներունի տանուտէրը մօտեցաւ Ապօին, և նրա ճակատը համբուրելով, ասաց.

—Աստուծոյ աչքը թող քո վրան լինի, որդի, դու իմ երեսը սիպտակացրիր։

§ 9. Ընկերութեան ընդհանուր ժողովների մէջ ներկայ գտնուող ամեն կարգի երկսեռ անդամները ընտրողական ձայն ունեն և ընտրելի են Ընկերութեան ամեն պաշտօնների համար։

III

Պաշտօնական անձինք և նոցա ընտրութիւնը։

§ 10. Ընկերութեան գործերը կառավարում են՝ ա. Վարչութիւնը և բ. Խմբագրական մասնաժողովը։

§ 11. Վարչութեան պաշտօնական անձինքն են՝ ատենապետ, փոխ-ատենապետ, երկու անդամք, ատենադպիր, գանձապահ և գրապահ։

§ 12. Վարչութիւնը վարում է ընկերութեան տնտեսական մասը, քննում է նորա դրամական հաշիւները և գումարը, պաշտպանում է, ուր պէտք է, նորա շահերը, պատրաստում է տարեկան ընդհանուր հաշիւը Ընկերութեան աշխատութեանց, կարգադրութեանց, կայքի և դրութեան մասին, ներկայացնում է ծախուց հաշիւը մօտաւորապէս և հոգում է Խմբագրական մասնաժողովի ընդունած գրքերի տպագրութեան մասին։ Վարչութեան կողմից են լինում բոլոր բանակցութիւնները որ և իցէ հաստատութեանց և անձանց հետ։

§ 13. Վարչութեան ատենապետը հսկողութիւն ունի, որ ճշդութեամբ կատարուին սոյն կանոնադրութիւնը և Ընդհանուր ժողովի, Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի վճիռները։

§ 14. Ատենապետի բացակայութեան ժամանակ՝ նրա պաշտօնը վարում է փոխ-ատենապետը։

§ 15. Վարչութեան ատենադպիրը կազմում է Ընդհանուր ժողովի և Վարչութեան նստերի արձանագրութիւնները։ Նա վարում է գրասենեակային գործերը և պահում է գրութիւնները։

§ 16. Վարչութեան գանձապահը վարում

Այս խօսքերով նա կամեցաւ յայտնել, որ Ապօն չը թողեց հօրը ամաչել ժողովրդի առջև։ Յետոյ նա մօտեցաւ Զօրային, որպէս իր միւս զաւակին, և ձեռքով նրա գլուխը շոյելով, ասաց.

—Զարաճճի, ինչու էիր այսպիսի գժութիւն անում։

Բայց Զօրան այժմ հանգիստ էր։ Նրա աչքերի մռայլը փարատվել էր։ Նա այժմ ճանաչում էր իր տէրերին, և, կարծես, փոչմանել էր իր գժութեան վրա։ Նրա պարանոցից կրկին կապեցին հաստ շղթան, կրկին շղթայից քարշ տուեցին ահագին գերանի կտորը, որի միւս ծայրը հանում էր գետին և անցնում էր անասունի առջևի երկու ոտների միջից, և այնուհետև սկսեցին քշել դէպի գետը, որ լուանան, որ զովացնեն նրան սառը ջրի մէջ։

Գիւղացիների բազմութիւնը դեռ չէր հեռացել ծերունի խաչոի տան դրնից, որովհետև Զօրայից յետոյ պէտք է դուրս բերէին միւս գոմէշներին, որոնք մինը միւսից աւելի ամէհի էին։ Բայց այս անգամ ծերունու որդիները աւելի զգուշութիւններ գործ դրեցին և մի առանձին անկարգութիւն չը պատահեցաւ։ Նրանք հերթով դուրս էին բերում գեղեցիկ, առողջ, դէր ու պարարտ անասուններին, որոնց իւրաքանչիւրը ամեն մի գիւղատնտեսական հանդիսարանի մէջ կարող էր առաջին մրցանակը ստանալ։ Ցանուտէրը հիացմունքով նայում էր նրանց վրա, և փչրում էր նրանց ճակատին կախարդական ձուն, որ աղատ պահէ չարաչքից։ Բացի դրանից, նա տէրտէրին գրել էր տուել մի-մի թիլիսմանական աղօթք, և եռանկիւնի ձևով կանաչագոյն կաշու մէջ կարելով, քարշ էր տուել իր անասունների պարանոցից։ Գիւղացիները տեսնելով, գովում էին խաչոի որդիներին, որ կարողացել էին այնպէս լաւ պահել իրանց անասուններին։ Հայրը, լսելով իր որդիների գովասանքը, ուրախանում էր։ Այսպէս պէտք է նրանք ամեն օր դուրս բերէին «խամ պահած» անասուններին, մինչև մի փոքր ընտելանային, մինչև մի փոքր սովորէին դրսի օդին և լոյսին, որ այնուհետև սկսէին հերկը հերկել։

(Կը շարունակվի)

է Ընկերութեան գրական գործերը և պահում է հաշիները: Նա ընդունում է բոլոր գրական վճարները և նուէրները, ծախսերը է անում Վարչութեան կարգադրութեամբ: Գանձապահը կազմում է տարեկան մանրամասն հաշիւ գումարների ելևմտից մասին:

§ 17. Պախսերի համար գանձապահը կարող է իւր մօտ ունենալ մինչև հարիւր ռուբլի: Մնացեալ բոլոր գումարը պահվում է տեղական բանկերից մէկի մէջ յանուն Ընկերութեան ըստ որոշման Վարչութեան: Գրական արժեթղթերը պահվում են գանձապահի մօտ:

§ 18. Գրապահը պահում է Ընկերութեան գրքերը և հրատարակութիւնները:

§ 19. Վարչութեան մէջ պէտք է կենտրոնական Ընկերութեան բոլոր գրագրութիւնները:

§ 20. Խմբագրական մասնաժողովը կայանում է եօթ անդամներից:

§ 21. Խմբագրական մասնաժողովը ընտրում է տպագրելիք հեղինակութիւնները և նշանակում է հեղինակներին կամ թարգմանիչներին վարձատրութիւն նոցա աշխատութեան համար: Առանց սորա վճռի ոչ մի գիրք չէ կարող հրատարակուիլ Ընկերութեան կողմից:

§ 22. Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի անդամները ընտրվում են երկու տարով, բայց առաջի տարուայ վերջը իւրաքանչիւրից դուրս են գնում երեքը վիճակով և նոցա տեղը ընտրվում են նորերը. երկրորդ տարին դուրս են գնում մնացած երեքը և նախագահները:

§ 23. Խմբագրական մասնաժողովը իւր միջից ընտրում է ատենապետ և ատենադպիր:

§ 24. Բոլոր վերոյիշեալ պաշտօնատար անձանց ընտրութիւնը կատարվում է Ընկերութեան ընդհանուր ժողովում գաղտնի քուէարկութեամբ:

Մանաւանդ. Ընտրուած համարվում են այն անձինք, որոնք կը ստանան ներկայ եղող անդամների ձայների մեծամասնութիւնը:

§ 25. Երկու տարուց յետոյ նոյն պաշտօնատար անձինք վերընտրելի են նոյն պաշտօնների համար:

§ 26. Ընկերութեան Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի յարաբերութեանց ձևը որոշվում է փոխադարձ համաձայնութեամբ: Իսկ նորանց մէջ պատահած բոլոր տարաձայնութիւնները լուծում է Ընդհանուր ժողովը:

IV

Վարչութեան, Խմբագրական մասնաժողովի և Ընդհանուր ժողովի նիստերը:

§ 27. Վարչութիւնը և Խմբագրական մասնաժողովը գումարվում են ըստ պահանջման հարկի և նոցա հրաւիրում են իւրեանց նախագահները:

§ 28. Վարչութիւնը և Խմբագրական մասնաժողովը կազմում են իւրեանց նիստերի արձանագրութիւնները, որոնք ստորագրում են բոլոր ներկայ եղող անդամները:

Մանաւանդ. Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի նիստերը կայացած են համարվում, երբ ներկայ են ոչ պակաս հինգ անդամից:

§ 29. Ընդհանուր ժողովները լինում են տարեկան և արտաքոյ կարգի և հրաւիրվում են լրագրաց մէջ տպած յայտարարութեամբ:

§ 30. Արտաքոյ կարգի ժողովները հրաւիրվում են ըստ պահանջման հարկի կամ ոչ պակաս քան ու հինգ անդամից առաջարկութեամբ:

§ 31. Տարեկան Ընդհանուր ժողովում՝ ա. Վարչութեան ատենապետը ներկայացնում է Ընդհանուր հաշիւ Ընկերութեան լրացած տարուայ աշխատութեանց, կարգադրութեանց, կայքի և դրութեան մասին. բ. ընտրվում են պաշտօնատար անձինք. գ. հաստատում է Վարչութեան ծախուց նախահաշիւը և դ. ընտրում են պատուոյ անդամներ:

§ 32. Ընդհանուր ժողովը ընտրում է իւր համար մի նախագահող:

§ 33. Ընդհանուր ժողովը կայացած է համարվում, երբ ներկայ եղող անդամների թիւը Թիֆլիսում գտնուող անդամների 5-ից պակաս չէ:

§ 34. Եթէ հրաւիրուած Ընդհանուր ժողովը չը կայանայ, նոր Ընդհանուր ժողովը կայացած կը համարուի, մինչև անդամ եթէ ներկայ եղող անդամների թիւը որոշեալ թըւից պակաս է:

§ 35. Ընդհանուր ժողովում նոյնպէս—Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի նիստերի ժամանակ, խնդիրները լուծվում են ձայների բազմութեամբ: Իսկ ձայների հաւասարութեան դէպքում նախապատիւ է համարվում ատենապետի կողմը:

Մանաւանդ. Ներկայ կանոնագրութեան փոփոխութեանց որոշմունքները օրինաւոր համարուելու համար, պահանջվում է ներկայ եղող անդամների երկու երրորդ ձայների առաւելութիւնը: Այդ որոշմունքները գործ դնելու համար պէտք է Կովկասեան Փոխարքայի թոյլտուութիւնը:

V

Ընդհանուր կանոնները

§ 36. Ընկերութիւնը ունի իւր կնիքը հետևեալ մակագրով. «Թիֆլիզի ընկերութիւն հայերէն գրքերի հրատարակութեան»:

§ 37. Ընկերութիւնը ամեն տարի ներկայացնում է Թիֆլիզի նահանգապետին իւր անցած տարուայ գործունէութեան հաշուի երկու օրինակ ռուսերէն լեզուով:

§ 38. Ընկերութեան գործունէութեան ընդհատելու միջոցին, այդ դէպքում գումարուած արտաքոյ կարգի ժողովը որոշում է Ընկերութեան բոլոր կայքը յանձնել հայոց հոգևոր դպրոցներից մինին:

Մեծ Իշխան Կովկասեան Փոխարքան բարեհաճեց հաստատել այդ կանոնագրութիւնը: Ստորագրված է՝ գիներալ—լէյտենանտ Ստարոսէլսկի: Թիֆլիս, 1 յունվարի 1880.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 25 փետրվարի

Ձեր լրագրի մէջ կարդալով Վանի մէջ եղած սովի մասին, հարկաւոր համարեցի իմ կառավարութեանը յանձնած Միխելսոնի տպարանի աշխատողներից նուիրատուութիւններ հաւաքել յօգուտ Հայաստանի սովատանջների: Ուղարկելով սորա հետ նուիրատուութեամբ ժողոված 38 ր. 40 կ., խնդրում եմ տպել ձեր լրագրի մէջ նուիրատուների հետևեալ ցուցակը: Տպարանի կառավարիչ Միքայէլ Մեղուինեանց 10 ր., Դաւիթ Լազարեվ 2 2 ր., Վասիլ Եղիազարեանց 2 ր., Եագոր Խնաեկեանց 2 ր., Джорбинадзе 1 ր. 50 կ., Дрейчъ 1 ր. 10 կ., Силиверстовъ 1 ր., Эльбакидзе 1 ր., Крупскій 1 ր., Ефремовъ 1 ր., Սարգիս Գրիգորով 1 ր., Бобровъ 1 р., Филиповъ 1 р., Բանանով 1 ր., Котетовъ 1 р., Гербутевъ 1 р., Махарадзе 1 р., Кочаровъ 1 р., Канатовъ 1 р., Парфеоновъ 50 к., Гаршининъ 50 к., Նալբանդեանց 50 կ., Миндоевъ 50 к., Окросцваловъ 50 к., Мирвеловъ 50 к., Джейрановъ 50 к., Константинъ Дашкевичъ 50 к., Ալէքսանդր Երզնկեանց 50 կ., Татуловъ 50 к., Гайворонскій 40 к., Котьевъ 30 к., Гумсадзе 10 к. Ընդամենը 38 ր. 40 կ.

Մ. Մեղուինեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շնորհակալութեամբ ստացանք Կ. Պոլսի մէջ հրատարակված «Ազգային ջուջերը» վերնագրով գրքոյկը, որի հեղինակն է Ց. Ց. Պարոնեան, «Լայս» ծաղրական թերթի խմբագիրը. Գրքոյկի Ա. մասը բաղկացած է Կ. Պոլսի մէջ յայտնի անձինքների կենսագրութիւններից, որոնք բոլորն էլ ծաղրական կերպով են գրված. Ահա այն անձանց անունները, որոնց կենսագրութիւնները այս գրքոյկի մէջ մըտան. Խորէն Գալֆայեան, Տիգրան Եուսուֆեան, Ստեփան փաշա Ալանեան, Յովհաննէս Էէրոյեանց, կարապետ Իւթիւճեան, (Մասիս). Մկրտիչ եպիսկոպոս Տիգրանեան, Յովսէփ Շիշմանեան, կարապետ Փանոսեան (Մաւզումէի Էֆքեար). Յարութիւն Մէրեէմ-Գուլի և վերջապէս Անտոն Հասուն. Մի և նոյն ժամանակ ստացանք Պարոնեանի հրատարակված «Լայս» թերթի վերջին համարը, որի մէջ կայ Գրիգոր Արծրունու ծաղրական կենսագրութիւնը.

—

Վաղը, չաբաթ օր, մարտի 1-ին Արծրունու թատրոնում պ. Կոզլով տալու է իր երկրորդ ներկայացումն.

—

Բարեկենդան տօնի պատճառով վաղը, չաբաթ օր, մարտի 1-ին, «Մշակի» համարը չի հրատարակվի. Հետևեալ համարը կը հրատարակվի երեքշաբթի օր, մարտի 4-ին.

—

Ստացանք յօգուտ Վանի սովալլուկների 10 ռուբլ Թիֆլիսի սուրբ Սարգիս եկեղեցու Մէքայէլ քահանայ Սիմէօնեանցից.

—

ՓՕԹԻՒՑ պ. Ց. Թիւրքեան ուղարկել է մեզ յօգուտ Հայաստանի սովատանջների 200 ռուբլ, որ նա ինքն պ. Մեսրովբ Գեօմարճեանի աջակցութեամբ հանգանակել է Փոթիի մէջ. Հանգանակութիւնը դեռ շարունակվում է.

—

Փետրվարի 24-ին երեկոյեան ժամը 9-ին հրդեհ յայտնվեցաւ Թիֆլիսի Նորաշէն եկեղեցու մօտ գտնված մի տան մէջ. Զարմանալի է ինչպէս յանախ սկսել են կրկնվել հրդեհները Թիֆլիսում. Մենք միշտ սարսափով մտածում ենք այն բանի վրա, որ եթէ Թիֆլիսի պէս անագին քաղաքում միաժամանակ յայտնվեն հրդեհները երկու կամ երեք տեղերում, մեր հրաշէջ վարչութիւնը, որ ընդամենը բաղկացած է 20—25 ծառայողներից և ունի ընդամենը երկու ջրհան, ինչպէս կը կարողանայ միաժամանակ հասնել երկու կամ երեք տեղ, յայտնված հրդեհը հանգցնելու համար. Պարզ է որ այն ժամանակ հրաշէջ վարչութիւնը ստիպված կը լինի միայն մի տեղ օգնութեան հասնել, իսկ քաղաքի միւս ծայրում այրվող տները թողնել վիճակի կամքին. Ի՜ մեր քաղաքային դուման, որ երկարու բարակ վիճաբանութիւններով է զբաղված ամենաանչնչին խնդիրների մասին, չէ էլ մտածում այդ մեզ համար ամենակարևոր և կենսական խնդրի մասին.

—

Կ. Պոլսից մեզ գրում են փետրվարի 21-ից. «Այսօր կիմանանք թէ Թիւրքաց կառավարութիւնը արգելել է «Մշակ» լրագրին Թիւրքիա մտնելը. Նոյնը և «Փորձ» համար ալ կըսեն. Մանրամասնութիւնք պիտի աշխատեմ հաղորդել ձեզ.»

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Միքէլաէէից, որ պատմութեան դասատու է Թիֆլիսի գիմնազիայում, նրա հեղինակած ռուսերէն բրոշիւրը «Три реформы» վերնագրով, Դա մի հրապարակական ճառ է, որ պարոնը կարդացել է փետրվարի 19-ին Թիֆլիսի գիմնազիայի դահլիճում.

—

Կիրակի, մարտի 2-ին, ԹԻՖԼԻՍԻ վրաց դերասանական խումբը ներկայացումն կը տայ Արծրունու թատրոնում.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈՒՆԱՍՏԱՆ

—

«Голосъ» լրագրի մէջ կարդում ենք հետևեալ առաջնորդող յօդուածը:

Ամէնից դարձեալ մի լուր ստացվեցաւ յունաց կառավարութեան դիտաւորութեան մասին ընդմիջել բանակցութիւնները Թիւրքիայի հետ: Հիմնվելով Բերլինի դաշնագրի վրա, յունաց կառավարութիւնը մտադիր է խնդրել պետութիւնների միջնորդութիւնը: Այդ վճիռը գուցէ այնպիսի վճիռներից չէ, որոնք անպատճառ իրագործվում են. յունաց կառավարութիւնը առաջին անգամը չէ, որ այդպիսի սպառնալիքներ է արել, որպէս զի ստիպէ Թիւրքիային զիջումներ անել, բայց մենք հարկաւոր ենք համարում նկատել, որ այդ լուրը կապ ունի երկու զանազան յատկութեան փաստերի հետ:

Ցայտնի է, որ անգլիական կառավարութիւնը մի քանի ժամանակ առաջ առաջարկեց յոյն-թիւրքական վէճի լուծումը միջազգային տեխնիկական մասնաժողովի յանձնել: Այդ առաջարկութիւնը համակրութեամբ ընդունվեցաւ եւրոպական մի քանի պետութիւններից: Գործը կարծես բարի փախճանի էր հասնում: Այդ ժամանակ Սալոնիկում մի անցք պատահեց, որի մասին հեռագիրը կրցկտուր և անհասկանալի տեղեկութիւններ հաղորդեց մեզ: Թիւրք ժանդարմների գնդապետ, անգլիացի Սինջ իր կնոջ հետ Սալոնիկի մօտ աւազակների ձեռքն էր ընկել, որոնք այդ զոյգը սարերն էին տարել և նրանց ազգականներից ահագին փողեր էին պահանջում նրանց ազատելու համար, սպառնալով սպանել գերիներին, եթէ այդ գումարը չը վճարվի: Հէնց որ այդ լուրը հասաւ Լայարդին, նա իսկոյն իր կարգադրութեան տակ եղած զինուորական նաւերը ուղարկեց Սալոնիկի ջրերը: Մի և նոյն ժամանակ «Էյտերի ընկերութիւնը» Կ. Պոլսից մի հեռագիր ստացաւ, որ հաղորդում էր, թէ Սինջին բըռնող աւազակները յոյներ են: Անգլիական կառավարութեան լրագիրները, առանց սպասելու հաստատ տեղեկութիւններին, շտապեցին յայտնել, որ աւազակները պէտք է որ Ցունաստանի հպատակներ լինեն, ուրեմն պատասխանատուութիւնն էլ Հելլենական կառավարութեան վրա պէտք է ընկնի: Յետոյ յայտնվեցաւ, որ Սինջը իր կնոջ հետ բռնված էր ալբանցիներից և որ այն տեղը, որտեղ նոքա տարված էին, Թիւրքաց հողի վրա էր գտնվում: Բայց այլ ևս ոչինչ չէր կարելի անել, որովհետև անգլիական զինուորական նաւերը արդէն ուղարկված էին յունաց ջրերը:

Թիւրքաց կառավարութեան տրամադրութիւնը, որ ստիպեց Ցունաստանին խօսել բանակցութիւնների դադարման մասին, Լայարդի այդ կարգադրութենից յետոյ երևաց: Մենք հակված ենք մտածել, որ Լայարդ Սինջի բռնելու պատճառով ազմուկ բաձրացրեց այն դիտաւորութեամբ, որ ինքն ցունաստանին պետութիւնների առաջը այն բռնէին, երբ Բ. Դրան յամառութիւնը ստիպում է Ցունաստանին դիմել եւրոպական պետութիւնների միջնորդութեանը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագիրներին գրում են Կ. Պոլսից, որ յունաց դեսպանը յայտնեց, որ իր կառավարութիւնը դիտաւորութիւն ունի իր յարաբերութիւնները կըտրել Բ. Դրան հետ, որովհետև սահմանների վերաբերութեամբ մինչև այժմ համաձայնութիւն չէ կայացել երկու պետութիւնների մէջ. Ցունաց կառավարութիւնը խնդրում է մեծ պետութիւններին, որոնք ստորագրել են Բերլինի դաշնագիրը, միջամտել այս կնճռոտ խնդիրը պարզելու համար.

—Մայրաքաղաքի լրագիրներին հեռագրում են Կ. Պոլսից, մարտի 1-ին (18 փետրվարի) հետևեալը. «Ժանդարմները բանտարկեցին երեք բօսնիացիներին, որոնք ատրճանակ էին գցում Օնուի և Կամարովի վրա. Վերջինը գնտակի երկու հարուած ստացաւ ոտում. Բանտարկվածները յայտնեցին, որ բոլորովին պատահմամբ դիպան նրանց գնտակները, և որ նրանք դիտաւորութիւն չեն ունեցել վիրաւորել Օնուին և Կամարովին, որոնց նրանք բոլորովին չեն ճանաչում.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ